

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հունիսի 28-ին հրավիրած առցանց ասուլիսում հայտարարեց, որ Բերձորն ու Աղավնոն անցնելու են ադրբեջանական վերահսկողությանը: Անդրադառնալով հարցին, թե ինչ է լինելու Բերձորի, Աղավնո ու Սուա գյուղերի ճակատագիրը՝ Ադրբեջանի կողմից շրջանցիկ ճանապարհը կառուցելուց հետո, Փաշինյանն ասաց. «Երթուղու փոփոխություն տեղի ունենալու պարագայում այն տարածքները, որոնք չեն գտնվում Լեռնային Ղարաբաղի հիվանավար մարզի նախկին այդ սահմանի մեջ, նրանք անցնելու են Ադրբեջանի վերահսկողությանը»:

Հինգշաբթի
13 հունիսի 2022թ.
№ 13 (579)

ՀԻՆԱԿԻՐ ԵՎ ՅՈՒՆԻԱՑԻՐ
«ՍՅՈՒՆԻԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾԱԿ
ՊԱՏԱՍԻԱՆՏԻԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru



Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am



Չինակոչիկների հերթական խումբը մեկնեց պարտադիր զինվորական ծառայության

Հունիսի 29-ին մարզկենտրոն Կապանում զինակոչիկների հերթական խումբը մեկնեց պարտադիր զինվորական ծառայության: Չորակոչիկ մասնակցում էին 33 պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար, գնդապետ Վահե Աղալարյանը, ստորաբաժանման զինակոչի բաժանմունքի պետ Սմբատ Դադոյանը, զինվորականներ, Արցախյան պատերազմի մասնակիցներ, զինակոչիկների հարազատներ և մտերիմներ:


Այս անգամ հայրենիքի ապագա պաշտպանները բանակ մեկնեցին Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցուց, որտեղ նրանց հայրենիքին անմասցորդ ծառայելու պատվիրաններ հղեց Կապանի հոգևոր հովիվ տեր Խաչատուր քահանա Չայրապետյանը. «Իրար վերաբերվեք այնպես, ինչպես հարազատ եղբորդ կվերաբերվես, եթե իրար հետ խաղաղությամբ ու սիրով լինեք, ոչ մի թշնամի ձեզ ձևի չի բերի, մեր սահմանները միայն հայրենիքին նվիրված զինվորները կարող են պաշտպանել: Հայրտություն է տեսնել, թե ինչ բարձր տրամադրությամբ եք մեկնում հայրենիքը պաշտպանելու»:

Աստծո օրհնությունը ստանալուց և հարազատներին ու մտերիմներին հրաժեշտ տալուց հետո բարեմաղթանքի տարափի տակ զինակոչիկները մեկնեցին հանրապետական հավաքակայան: Ինչպես «Սյունյաց երկիր» փոխանցեց գնդապետ Վահե Աղալարյանը, ամառային զորակոչ ավարտվելու է հուլիսի 30-ին: **ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

Փառահեղ Վահանավանքի հիմնադրման 1111-րդ տարեդարձը՝ համաժողովրդական տոնախմբությամբ

Տասներորդ դարի սկզբին Սյունյաց աշխարհում տեղի ունեցավ հոգևոր մեծ իրադարձություն. Բաղբ գավառի գահակալ Իշխան Ձագիկի որդու՝ Վահանի նախաձեռնությամբ և մտքի ուժով հիմնադրվեց Վահանավանքը, որ պիտի դառնար հոգևոր և գիտական մտքի կենտրոն:

Աստծո փառքի տաճարի հիմնարկեքից մեզ 1111 տարի է բաժանում: Հունիսի 25-ին Վահանավանքի վանական համալիրում նշվեց այդ տարեդարձը: Հանդիսությունն առավելակցից սկսվեց մարզկենտրոնի Հալիծոր թաղամասից՝ ուխտագնացությանը բնորոշ քայլերով, որին մասնակցում էին Կապանի համայնքապետ



Վերո Փարսյանը, եկեղեցու սպասավորներ ու բազմաթիվ կապանցիներ, ինչպես և հյուրեր: Ժամը 10-ից հետո վանական համալիրի տարածքում ավրեցնող աշխուժություն էր տիրում: Այդտեղ էին Սյունիքի տարբեր ուսանողներից մարդիկ, հյուրեր մայրաքաղաքից, նաև Վահանավանքի երբեմնի արշավախմբի

անդամներ, պեղումներին ուսանողական տարիներին մասնակցած անձինք, այժմ արդեն գիտական աշխարհի ներկայացուցիչներ: Առիթը բաց չեմ թողնում զրուցելու նրանց հետ. «Շատ կարևոր և հուզիչ օր է ինձ և ընկերներինս համար, քանի որ 42 տարի անց՝ 1980 թվականից հետո, նորից ուրբ դրեցինք Հարունակությունը՝ էջ 4

Ատամնաթափ մի մարդ, գանգով կապկի... - Թույն էր թորում նրա շրթունքներից... Եվ անունը նրա «Քնքշություն» էր:

ԵՂՈՇԵ ՉԱՐԵՆՑ

Հայաստանին Հիսուս Քրիստոսի արձան պետք չէ

Գերմանիայի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Սերուբե Իսախանյանի կողմ



«Հարգելի պարոն Ծառուկյան, Այսօր մամուլից տեղեկացանք, որ, առանց անսպառ բազմաթիվ անձերի ու հաստատությունների կոչերին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հորհորներին, անայլայլ կերպով շարունակում եք իրագործել Հիսուս Քրիստոսի հսկա արձանը կառուցելու ձեր ծրագիրը, կատարել եք Նույնիսկ հիմնարկեքը:

Որպես հայ մարդ, հոգևորական ու եպիսկոպոս, աղաչում, խնդրում, պահանջում եմ, ի սեր Աստծո, դադարացրեք այս ծրագրի իրագործումը: Այն պարզապես հարիր չէ բազմադարյա հայ մշակույթին, խորթ է մեր մտածելակերպին, դեմ է Հայ Եկեղեցու հաստատած ավանդույթներին:

Աշխարհի շատ երկրներում շատ ու շատ մշակութային, պատմական ու կրոնական կոթողներ կան, որ չկան Հայաստանում, և դա բնական է: Հայաստանն աշխարհին ներկայանում է բազում մշակութային, պատմական ու կրոնական արժեքներով, որ չկան աշխարհի և ոչ մի ուրիշ երկրում: Եվ սա էլ բնական է: Մեզ ծիծաղի առարկա մի դարձրեք, կաթոլիկյան աշխարհին հատուկ մի երևույթ մի պատճենահանեք մեր աշխարհում: Հիսուս Քրիստոսի արձանը ոչ կավելացնի մեր հավատքը, ոչ կամրապնդի մեր քրիստոնեական արժեքամակարդը, ոչ էլ աշխարհի աչքին կբարձրացնի Հայաստանի վարկն ու հեղինակությունը:

Դուք բազում-բազում բարի գործեր եք կատարել, որոնք ընդունվել ու գնահատվել են հայության կողմից՝ Հայաստանում թե արտերկրում: Ձեր բարերարությամբ վեր են խոյացել բազմաթիվ եկեղեցիներ, դպրոցական, կրթական ու մարզական հաստատություններ: Հազար շնորհակալություն ձեզ: Հայ ժողովուրդը երախտապարտ է ձեզ՝ այս իրագործումների համար: Դրանցից յուրաքանչյուրը եղել են անհրաժեշտ ու օգտաշատ իրագործումներ: Հիսուս Քրիստոսի արձանը ոչ անհրաժեշտ է, ոչ էլ օգտաշատ:

Դրանք ձերն է, Դուք կարող եք բնականաբար այն ծախսել Ձեր նախընտրած ձևով: Ազատ եք իրագործելու Ձեր ծրագրերն ու նախաձեռնությունները այնքան ժամանակ, քանի դրանք չեն հակասում մեր դարավոր ավանդույթներին ու ավանդություններին:

Աղաչում եմ, խնդրում եմ, պահանջում եմ, դադարացրեք արձանի կառուցման աշխատանքները: Հայաստանին Հիսուս Քրիստոսի արձան պետք չէ:

ԲԵՆԻԿՆ, 10 ՀՈՒՆԻՍԻ 2022Թ. »:



Առեղծված. այնքան սպասված Խոտ-Որոտան ճանապարհի կառուցումը դադարեցվել է

2020 թ. դեկտեմբերի 18-ի խայտառակությունից հետո, երբ թուրք-ազերիներին նվիրեցինք առաջնագիծը պաշտպանող մեր մարտական դիրքերը, նոր իրավիճակ ստեղծվեց սյունիքյան ավտոմայրուղիներում:

Այդ ժամանակ էլ ծնվեց մարզի որոշ հատվածներում այլընտրանքային ճանապարհներ կառուցելու գաղափարը: Դրանց անհրաժեշտությունն ուղղակի հրամայական դարձավ 2021-ի աշնանը, երբ թուրք-ազերիներն օկուպացրին Գորիս-Կապան ավանդական մայրուղու՝ Որոտան գյուղի մերձակա հատվածը, ինչպես և Կապան-Ճակատեն, Կապան-Եղվարդ ճանապարհները:

Գորիս-Կապան մայրուղու շրջափակումը հաղորդակցության ուղիների արգելափակում չէր ստել: Դրա հետևանքով հումանիտար մտահոգիչ վիճակ ստեղծվեց Որոտան, Շուշուի, Բարձրավան գյուղերում: Ռիսկային դարձան մայրուղուն հարակից անտառների, արտավայրերի, այգիների ու ջրային ռեսուրսների օգտագործումը:

Ստեղծված վիճակը հաղթահարելու համար առաջ բաշվեց այլընտրանքային մի քանի ճանապարհ կառուցելու ծրագիր, այդ թվում՝ Խոտ-Որոտան ճանապարհի կառուցման ծրագիրը:

Նպատակահարմար գտնվեց նոր մայրուղին կառուցել այն երթուղով, որտեղով



1960-ականներին պատրաստվել էր Խոտ-Որոտան ավտոճանապարհը: Խազալ կապից Որոտան գետի ափ ձգվող մոտ 10 կմ երկարությամբ ճանապարհը 1960-ականներին դարձել էր Կապան-Գորիս-Երևան (և ընդհակառակը) երթուղու կառուցման ամենահարմար ուղին: Այդ խճուղով էին շինակյութերն ու մեքենասարքավորումները հասցնում Որոտանի ափ, որտեղ կառուցվում էր Տաթևի հիդրոէլեկտրակայանը:

րարների աշխատանքը, որը տեղում գլխավորում էր Գինեվան Ղազարյան երիտասարդ աշխույժը:

Կառուցվող ճանապարհի աշխատանքային իրապարակներ էին բերվել ամենաժամանակակից մեքենաներ, որոնց զորությամբ էլ ճեղքվում-ընդլայնվում-հարթեցվում էին լեռնաբազուկները, զանափակները:

Աշխատանքները շարունակվել էին նաև ձմռան ամիսներին. խնդիր էր դրված հնարավորինս շուտ և որակով ավարտել նոր ճանապարհի կառուցումը:

Խոտ գյուղի վարչական ղեկավար Մարտիրոս Գրիգորյանը բարձր է գնահատում ճանապարհաշինարարների աշխատանքը՝ «Անգամ ձմռանը, առավոտվա ժամը 7-8-ից լսվում էր ճանապարհաշինական մեքենաների հռնդունը»:

Յոթ-ութ ամիս տևած բոռն շինաշխատանքի արդյունքն այսօր տեսանելի է՝ հողային մեծածավալ աշխատանք, գրեթե ասֆալտապատման հանգրվան հասցված ճանապարհահատվածներ, առանձին տեղերում անհրաժեշտ խճի, թարթի, որոշ կոնստրուկցիաների կուտակումներ...

Ընդ որում սկիզբ է դրվել այնպիսի ճանապարհի կառուցման, որը ներկայիս կիսակառուց վիճակում նույնիսկ բազմապատիկ անգամ դյուրին կարող է դարձնել Գորիս-Կապան երթուղու կառուցումը:

Սակայն, որքան էլ տարօրինակ է, հաղորդակցության ուղիների քառսի մեր օրերում 2022 թ. ապրիլից դադարեցվել են Խոտ-Որոտան այլընտրանքային ճանապարհի կառուցման աշխատանքները: Եվ ճանապարհաշինական մեքենաները երրորդ ամիսն է՝

ճանապարհը, սակայն, իր նշանակությունը կորցրեց 1971-ից հետո, երբ արդեն (1970-ի դեկտեմբերին) շահագործման հանձնվեց «Տաթև» հեկը:

Անցած հինգ տասնամյակի ընթացքում ճանապարհի առանձին հատվածներ բանիցս փլուզվել են, որոշ տեղերում սողանքներ են առաջացել, երկնահաս լեռնագագաթներից հսկայական քարաբեկորներ են թափվել, նաև հողակույտեր են առաջացել, ջրի անկառավարելի հոսքերն էլ տեղ-տեղ բշտի-տարել են ճանապարհի երթուղու մասը, հենապատերը...

Երբեմնի այդ ճանապարհի երթուղով էլ 2021-ի սեպտեմբերին սկսեցին Խոտ-Որոտան այլընտրանքային ճանապարհի կառուցման աշխատանքները...

Շինարարությունը վստահվեց «ճանապարհ» ՍՊ ընկերությանը՝ Բալահովիտից:

Ըստ ծրագրի՝ Խոտ-Որոտան այլընտրանքային ճանապարհը մեկ այլ ճյուղ պիտի ունենա, ինչն ավելի գրավիչ է դարձրել շրջանցող այդ ուղու կառուցումը: Չհասած Շակեր, Գորիս բաղաբեց Կապան ձգվող ճանապարհը մեկ ուրիշ այլընտրանքային ճանապարհով (մոտ չորս կմ երկարությամբ) պիտի միանա Խոտ-Որոտան ուղուն: Դա նշանակում է, որ Գորիսից Կապան գնալու համար (Մ-2-ով) հարկ չի լինի հասնել Խոտ գյուղ, որտեղից էլ՝ Որոտան:

Հարակից այդ ծրագրի իրագործումը հավանաբար կյանքի կկոչվի Խոտ-Որոտանը կառուցելուց հետո:

Խոտ-Որոտան ճանապարհի շինարարական աշխատանքներին մեր պարբերականը հետևում էր սկզբից ի վեր:

Եվ, առանց չափազանցության, հիացմունք էր պատճառում ճանապարհաշինա-

պարապորդի մատնված կանգնած են շինարարակներում:

Թե ինչ պատճառով է կիսատ թողնվել կամ դադարեցվել ճանապարհի կառուցումը, պաշտոնական որևէ բացատրություն առայժմ չկա: Փոխարենը շրջանառվում են ամենատարբեր ու հակասական խոսակցություններ:

Իսկ շինարարության հետ կապ ունեցած խոտեցիներից բաղաձ կցկտուր տեղեկատվությունից պարզ է դառնում, որ 2021-ի սեպտեմբերին մեկնարկած շինարարությունը դեռևս նախագիծ-նախահաշիվ չունի, որ մինչև հիմա շինարարի հետ պայմանագիր կնքված չէ, որ մոտ մեկ մլրդ դրամի համարժեք աշխատանքի դիմաց դեռևս ամբողջական ֆինանսավորում կատարված չէ... Շինարարին ասել էին՝ սկսեք, և ամեն ինչ օրինական հունի մեջ կմտնի, բայց...

Մի հանգամանք ևս. նախագծի բացակայության կամ նախագծողների անպատասխանատվության հետևանքով կառուցվող ճանապարհին բանիցս սողանքներ են առաջացել՝ փոշիացնելով մինչ այդ կատարածը: Եվ ճանապարհաշինարարը ստիպված է եղել նոր երթուղով առաջ գնալ՝ կատարելով կրկնակի ծախսեր...

Սյունիքում ակնկալում են, որ 33 տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գևորգ Սանոսյանը լույս կսփռի Խոտ-Որոտան ճանապարհին առաջացած անհեթեթ իրավիճակի վրա:

Սյունիքում սպասում կա նաև, որ այդ ճանապարհի կառուցումը կվերսկսվի ու ավարտին կհասցվի հնարավորինս շուտ: Մասնագետների կարծիքով՝ մեկ-երկու ամիսը բավարար կլինի, որ ավարտին հասցվեն հողային աշխատանքները: Եվ դա հնարավորություն կտա, որ Գորիս-Կապան երթուղու վերստին իրականացվի Մ-2 մայրուղով, եթե, իհարկե, մեզ համար անհայտ և ուրիշ խանգարող հանգամանքներ չկան...

Մինչդեռ պարզ չէ՝ ճանապարհաշինական կազմակերպությունը կդիմանա՞ ամիսներ շարունակ տևող պարապորդ-փորձությանը, արդյո՞ք ընկերության մասնագետները գլուխները կախ կսպասեն խնդրի հանգուցալուծմանը, թե՞ կցրվեն և իրենց համար նոր աշխատատեղ կգտնեն (զուգեք արդեն իսկ ցրվել են):

Խոտ-Որոտան կառուցվող ճանապարհին ստեղծված անորոշությունն արդարացի մտահոգություն է առաջ բերել Խոտ գյուղում մեկ այլ առումով ևս:

Արտավայրերի սակավությամբ հայտնի գյուղի դաշտավայրերի մի մասը հնարավոր չէ արդյունավետ օգտագործել՝ հողային աշխատանքների կատարման ընթացքում ճանապարհից արտավայրեր ձգվող արահետների ոչնչացման հետևանքով:

Անավարտ հողային աշխատանքների պատճառով խաթարվել է նաև Խազալ կապի այգիների ոռոգման համակարգի գործունեությունը: Եվ համայնքային իշխանության ջանքով ժամանակավոր լուծում է գտնվել, որը, սակայն, մշտական ու արդյունավետ լինել չի կարող: Առումների վերականգնումը հնարավոր կլինի, եթե ավարտին հասցվեն հողային աշխատանքները:

3. Գ. Խոտ-Որոտան ճանապարհի ամփոփող ռեզյումեի ծանոթանալու համար «Սյունյաց երկիր» ստեղծագործական խումբը ճանապարհաշինական տեղամաս էր այցելել հուլիսի 10-ին:

Երբ արդեն բարձրացել էին Որոտանի կիրճից ու կանգ առել Խոտի մերձակայքում գտնվող ջրամբարի մոտ («Տաթև» հեկի օրվա կարգավորիչ ջրամբարն է), մեր առջև՝ ոչ այնքան հեռվում (արևելյան ուղղությամբ), պարզորոշ երևում էր Կուբաթլիից դեպի Էյվազլար մոզոնված անվամբ տեղանք ձգվող մայրուղին, որտեղ արդեբեջանցիները բոռն շինարարական աշխատանքներ են իրականացնում:

Վերջին անգամ այդ վայրերով անցել էինք 2019-ի աշնանը. գնացել էինք Լալազարի կամուրջ, Դավիթ Բեկի կողմից հիմնադրված Դավուղյու (Դաուղյու, Դավուղյու) գյուղ, Բղենո բերդ...

Մի նեղ ու դժվարմատչելի ճանապարհ էր այն օրերում, իսկ հիմա՝ լայնահուն ճանապարհ, որն առավել բարեհարմար են դարձնում...



Փառահեղ Վահանավանքի հիմնադրման 1111-րդ տարեդարձը՝ համաժողովրդական տոնախմբությամբ

Սկզբը՝ էջ 1

այս սուրբ հողի վրա, - պատմում է պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Երևանի Մխիթար Հեթանոս անվան պետական բժշկական համալսարանի հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Վահան Մելիքյանը: «Շատ կարևոր են համարում մեր ղեկավարի՝ Գրիգոր Գրիգորյանի դերը, ով 1966 թվականից այստեղ էր, և նրա նվիրումի ու ջանքերի շնորհիվ վերահասունեց Վահանավանքը և դարձավ բոլորի սեփականությունը: Այդ առիթով իմ և ընկերների անունից երախտագիտությունս են հայտնում մեր սիրելի ուսուցչին, ով ինքնամոռաց նվիրվել էր վանքը վերականգնելու առաքելությանը: Շուրջ երկու ամիս կատարեցինք հնագիտական ուսումնասիրություններ, հիմնականում շինարարական աշխատանքներ, և հպարտությամբ կարող եմ ասել, որ Սուրբ Աստվածածին տաճարը փաստորեն հողի տակից մենք դուրս բերեցինք, ինչպես նաև Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի տապանաքարը՝ արձանագրությամբ և այլն»:

Մարդկանցով շրջապատված նկատում ենք նաև Ռուսոյի Ղոնյանին, ով 1980-1988

թվականներին ղեկավարել է Կապանի շրջանը՝ կուլտուրայի առաջին քարտուղարն էր. «Աշխատանքի բերումով մասնակիցն են եղել համայնի վերականգնմանը, մտովի հիշում են մարդկանց, ովքեր նախածեռնություն են դրսևորել և մասնակցել վանքի պեղումներին: Բայց ուզում եմ հատկապես երախտագիտություն հայտնել Գրիգոր Գրիգորյանին, ով իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է այս համայնի վերականգնմանը: Հիշում եմ ինչպես տարեց մարդիկ ջանքերն էին կատարում էին, թե ինչու շաբաթ-կիրակի օրերին չեն գնում Վահանավանք և օգնում վանքի վերականգնմանը: 1960-ականների կեսերից միայն երեք կամարներն էին հողից մեկ մետրի չափ դուրս ցցված: Այդ ժամանակից էլ սկսեցին պեղումներն ու վերականգնումը՝ մինչև Վահանավանքն այս տեսքն ունեցավ»:

Վանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մատուցվեց սուրբ պատարագ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Յակոբյանի, հոգեշնորհի հայր Գարեգին վարդապետ Յամբարձումյանի, Քաջարանի, Կապանի, Վահանավանքի վանական համայնի հոգևոր հովիվների ձեռամբ: Այնուհետև՝ պատարագից հետո, կատարվեց անդաստանի կարգ. օրհնվեցին աշ-



խարհի չորս ծագերը:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու սյունասարահում տեղի ունեցավ հանդիսության պաշտոնական մասը: Վահանավանքի, որպես հոգևոր տաճարի, նրա հիմնադրման, վանական համայնի պեղումների և վերականգնման աշխատանքների վերաբերյալ իրենց ելույթներում մանրամասնեցին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահը, «Կապանի թանգարանների միավորում» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Գևորգյանը, Կապանի պատմության անգուգական գիտակ Գրիշա Սմբատյանը, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Մանուչարյանը, Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը: Ելույթների ավարտից հետո հանդես եկավ «Գեղարդ» երգչախումբը, որը ղեկավարում էր մեծահամբավ երաժիշտ, պրոֆեսոր Միեր Նավոյանը (խմբավար՝ Անահիտ Պապյան): համույթը կատարեց հոգևոր և ժողովրդական երգեր:

Այնուհետև հանդիսությունը շարունակվեց մերձակա անտառի բացատում՝ մատառի արարողությամբ: Ելույթ ունեցան Կապանի մշակույթի կենտրոնի պարային խմբեր և երաժիշտ կատարողներ՝ օրվա խորհուրդն ամբողջացնելով աշխույժ ինչերանգներով: Տոնախմբության մասնակիցներից շատերը, ովքեր շատ թե քիչ տեղյակ էին Վահանավանքի պատմությանը, մեծապես երախտագիտությամբ էին հիշում Ռաֆայել Մինասյան Նշանավոր կապանցու, հռչակավոր հնագետներ Սեդրակ Բարխուդարյանի, Բաբկեն Առաքելյանի, վանքի վերականգնող ճարտարապետ Աշոտ Հովսեփյանի նվիրական անունները, առանց որոնց ակտիվ գործունեության հնարավոր չէին դառնա ինչ վանքի տարածքի պեղումները, ինչ էլ վերականգնողական աշխատանքները: Տոնախմբությանը մասնակցում էին նաև Քաջարան և Տաթև խոշորացված համայնքների ղեկավարներ Մանվել Փարամազյանն ու Սամվել Լալայանը: Վահանավանքի հիմնադրման տարեդարձին նվիրված տոնը կազմակերպվել էր Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի նախածեռնությամբ ու ջանքով, ինչը, անտարակույս, գնահատանքի է արժանի:

Ի դեպ, Կապանի համայնքային իշխանության համար, դատելով վերջին 3-4 տարիների անցուդարձից, հոգևոր-մշակութային կյանքի նորովի կազմակերպումը դարձել է առաջնահերթություն, ինչը, որքանով տեսնում ենք, շարունակական լինելու, նոր դրսևորումներ ունենալու և մեր արժեհամակարգն ազգային շաղախով հարստացնելու ակնհայտ միտում ունի:

Հ.Գ. Վահանավանքի մասին ամբողջական և հիմնավոր գիտելիքներ ստանալու համար կարող եք ծանոթանալ «Սյունյաց երկիր» պարբերականի 2012 թ. դեկտեմբերի 15-ի բացառիկ թողարկմանը (№ 30 (271)):

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Կապանի պետթատրոնի շենքի պատին փակցվեց Գալյա Նովենցի և Երվանդ Ղազանչյանի միասնական հուշատախտակը

«**Ի**նստիտուտն ավարտելուց հետո առաջին թատրոնը, որտեղ աշխատել եմ և ունեցել հաջողություններ և անհաջողություններ, եղել է Կապանի Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնը: Այստեղ երկար չեմ աշխատել, թեպետ հասցրել եմ ինչ-որ դերեր խաղալ, ինչ-որ չափով ինձ հաստատել» - հուշերում գրել է Գալյա Նովենցը:

Բարձրագույն կրթություն ստանալուց հետո գրեթե ամբողջ կուրսով՝ ամուսինը՝ Երվանդ Ղազանչյանը, Արծրուն Բոչարյանը, Գուժ Մանուկյանը, էլի տաղանդավոր մարդիկ եկան և ապրեցին Կապանի թատրոնը:

Համարյա ամեն օր գյուղերում ներկայացումներ էին խաղում, ժողովուրդն ապրում էր թատրոնով, նաև ըստ ամենայնի գնահատում դերասանների խաղը:

Եվ հիմա եկել է գնահատանքի պահը: Հուլիսի 1-ին Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետթատրոնի շենքի պատին մշտա-

կան գրանցում ստացավ ՀՀ ժողովրդական արտիստներ Գալյա Նովենցի և Երվանդ Ղազանչյանի միասնական հուշաքանդակը (ճարտարապետ՝ Վարդան Հարությունյան, քանդակագործ՝ Հայկ Թոքմաչյան): Այն բացելու պատիվը վերապահվեց դերասանների որդուն՝ Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանի և Կապանի համայնքապետի տեղակալ Գոռ Թադևոսյանին:

Հ.Ղազանչյանը հուշատախտակի բացման խոսքում նշեց, որ իր ծնողները անկարագրելի սիրով էին համակված Կապանի հանդեպ և այդ սերը փոխանցեցին իրեն. «Կարծում եմ այս հուշատախտակը միայն այսօրվա համար չէ, այլ ապագա սերունդների: Կասկած չունեմ, որ հետագայում մարդիկ, անցնելով այստեղով, կարողյով այդ անունները, կհետաքրքրվեն թատրոնի պատմությամբ, թատրոնի անցյալով: Եթե մենք մեր հոգու խորքում հավերժ չպահենք անցյալը,



ոչ մի ապագայի չենք հասնի»:

Վերջում նա երախտագիտություն հայտնեց Կապանի համայնքի ղեկավարի ավագանուն, որ առանց բյուրոկրատական քաշքշուկների որոշում կայացրեց, որ թատրոնի շենքի պատին հու-

շատախտակ պիտի տեղադրվի: Հուլիսի 1-ը Գալյա Նովենցի ծննդյան օրն էր: Նա կդառնար 85 տարեկան...

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ԳեոՊրոՄայնինգ ընկերությունն ընդլայնում է համագործակցությունը Հայաստանի և Ռուսաստանի բուհերի միջև



ԳեոՊրոՄայնինգ ընկերությունների խումբը ընդլայնում է համագործակցությունը Սանկտ Պետերբուրգի Պլեխանովի անվան հանքարդյունաբերական համալսարանի հետ: Հայ ուսանողներին համալսարանում սովորելու գործողությունը բացի ընկերությունը, աշխատակիցների որակավորումը բարձրացնելու նպատակով, այս տարի մեկնարկել է «Լրացուցիչ որակավորում» ծրագիրը:

Բացի այդ, կողմերը պայմանավորվել են խորացնել համագործակցությունը Սանկտ Պետերբուրգի համալսարանի մասնակցության առումով՝ իրականացնելով ընկերության կողմից ներկայացված նպատակային կրթության զարգացման ծրագիրը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղում, իսկ հետագայում՝ Նաև ՀԱՊՀ լեռնահանքային արդյունաբերության և օգտակար հանածոների վերաձևական ոլորտում իրենց փոր-



GeoProMining расширяет сотрудничество между армянскими и российскими вузами

Группа компаний GeoProMining расширяет сотрудничество с Санкт-Петербургским горным университетом им. Плеханова. Кроме направления армянских студентов на обучение в вуз, с текущего года стартовала программа «Дополнительная квалификация» по повышению квалификации сотрудников компании.

Кроме того, стороны договорились углублять сотрудничество в плане участия СПбГУ в реализации представленной Компанией программы развития целевого образования в капанском филиале Национального политехнического университета Армении, а позже и на факультете горного дела и обогащения полезных ископаемых НПУА с внедрением их опыта, учебно-образовательных планов и технических стандартов. В ближайшее время будет создана совместная компетентная рабочая группа, которая начнет работать над проектом.

«В рамках недавней встречи с партнерами в Петербурге, мы отметили наш совместный успешный опыт работы на протяжении 10 лет по программе «Стипендиальный проект», в рамках которого студенты из Армении по нашему направлению и социальному содействию

получают бесплатное образование в Петербургском техническом вузе и в последствии устраиваются на работу на наших активах. Кроме того, с текущего года стартовал новый проект «Допквалификация» по профессиональной переподготовке сотрудников инженерно-технического состава. Армения богата горнорудными компетенциями, и основа основ отрасли заложена в образовательных процессах. Наша задача – вывести факультет горного дела и металлургии профессионально-ориентированного высшего образовательного учреждения Национального Политехнического Университета Армении на международный уровень», - отметила представитель GeoProMining Рузанна Григорян.

Санкт-Петербургский горный университет (Горный институт) – один из крупнейших вузов по горному делу и первое высшее техническое учебное заведение России. Вуз готовит специалистов для всех отраслей горно-металлургического и нефтегазового комплекса, геологической службы, промышленного и гражданского строительства. В университете обучается 16,5 тысяч студентов по 97 направлениям и специальностям на 9 факультетах.

ծի, կրթական պլանների և տեխնիկական չափորոշիչների ներդրումը: Առաջիկայում կստեղծվի իրավասու համատեղ աշխատանքային խումբ, որը կսկսի աշխատել տեխնիկատնտեսական հիմնավորման և նախագծի վրա:

«Վերջերս Սանկտ Պետերբուրգում, գործընկերների հետ հանդիպման շրջանակներում մենք նշեցինք «Կրթաթոշակի ծրագրի» 10 տարվա համատեղ աշխատանքի մեր համատեղ հաջող փորձը, որի շրջանակներում Հայաստանից ժամանած ուսանողները, մեր ուղղորդմամբ և սոցիալական աջակցությամբ անվճար կրթություն են ստանում Սանկտ Պետերբուրգի տեխնիկական համալսարանում և հետագայում աշխատանք են ստանում մեր ակտիվներում: Բացի այդ, այս տարի մեկնարկել է ինժեներատեխնիկական անձնակազմի մասնագիտական վերապատրաստման «Լրացուցիչ որակավորում» նոր նախագիծը: Հայաստանը հարուստ է հանքարդյունաբերական կարողություններով, իսկ արդյու-

նաբերության հիմքը դրվում է կրթական գործընթացներում: Մեր խնդիրն է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի մասնագիտական ուղղվածություն ունեցող լեռնամետալուրգիական ֆակուլտետը հասցնել միջազգային մակարդակի», - ասաց ԳեոՊրոՄայնինգ ընկերությունների խմբի ներկայացուցիչ Ռուզաննա Գրիգորյանը:

Սանկտ Պետերբուրգի համալսարանը խոշորագույն հանքարդյունաբերական համալսարաններից է և Ռուսաստանի առաջին բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատությունը: Համալսարանը պատրաստում է մասնագետներ լեռնամետալուրգիական և նավթագազային համալիրի, երկրաբանական հետազոտության, արդյունաբերական և բաղաբաղաչական շինարարության բոլոր ոլորտների համար: Համալսարանը 9 ֆակուլտետներում ունի 16,5 հազար ուսանող՝ 97 ուղղություններով և մասնագիտություններով:

Արշալույս տատը տոնում է 100-ամյա հոբելյանը...

Հուլիսի 3-ին «Քարավան» ռեստորանային համալիրում հանդիսավոր պայմաններում նշվեց Մեծ հայրենականի իրադարձությունների մեր տարածաշրջանից միակ ակնատեսի և վկայի՝ Արշալույս Թաղևույսյանի ծննդյան 100-ամյակը: Թեպետ ձեռնափայտով և դժվար բայելով՝ հոբելյանը հասավ իրեն հատկացված պատվավոր տեղը, որի վերևում 100 թվանշանի հետ մեկտեղ գրություն կար՝ **իսկ արշալույսներն արդեն խաղաղ են:**

Մեծ հայրենականի օրերին Արշալույս Թաղևույսյանն արյունոտ արշալույսներ շատ է տեսել: Ավագ եղբայրը ռազմաճակատից նամակ գրեց, ինքն էլ որոշեց գնալ եղբոր հետքերով՝ նրան հանդիպելու հույսով, բայց այդպես էլ չգտավ եղբորը, բայց հայտնվեց պատերազմի բառադրույթները: Չենթախրե-տանային զորամասում ծառայեց. գնդացրորդ էր, զորամասը կռվի թե՛ վերտրոմ էր՝ Օրջոնիկիձե, Սիմֆերոպոլ, Սևաստոպոլ, Մախաչկալա...

Հիշում է նաև պատերազմի հաղթական օրը, քեֆ են արել, ուրախացել, շնորհավորել միմյանց, որ վերջապես հայրենի օջախներ պիտի վերադառնան... Հետպատերազմյան տարիներին տարբեր աշխատանքներ է կատարել՝ կոլտնտեսությունում է աշխատել, իսկ երբ կենսաթոշակի է անցել, կոմբինատում պահեստապետ էր:

Նաև մոտ ու հարազատ մարդկանց ցավալի կորուստներ է տեսել, բայց չի կորցրել

լավատեսությունը:

Առաջացած տարիքի համեմատ սթափ գիտակցություն ունի, դեռ ավելին՝ տոնակատարության օրը իրավիճակների հետ նարդի է խաղացել, նաև հաղթել:

Եվ հիմա նստած է դահլիճի կենտրոնում, ու կինոյի ժապավենի կադրերի պես անցնում են այն ամենը, ինչ նրա հետ տեղի են ունեցել 100-ամյա կյանքի ճանապարհին:

Նրան շնորհավորելու են եկել մարզի և համայնքային իշխանությունների ղեկավարներ, բարձրաստիճան գեներալներ, Քաջարանի հոգևոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը, մոտ ու հարազատ մարդիկ, որկիցներ, հյուրեր:

Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանը տանտիրոջ իրավունքով առաջին և շնորհավորում և նվեր հանձնում հոբելյարին, բարեմաղթանքի խոսքեր հղում. «Պու՛ք ճաշակել եք կյանքի ամենադառը պտուղները, ապրել եք կյանքի ամենադժվար օրերը, պահել և պահպանել եք Ձեր ընտանիքի ավանդույթները ու մեծ սիրով այն փոխանցել Ձեր զավակներին, թոռներին ու ծոռներին»:

Հարյուրամյա Արշալույս տատին մաղթանքներ հղեցին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, Քաջարանի հոգևոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը, Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, «ՀՊՄԿ» ՓԲ ընկերության տրանսպորտի ղեկավար Լևոն Լևոնյանը



Ավավերյանը, Մեղրու սահմանապահ ջոկատի հրամանատար Ալեքսանդր Բուրչոյանը: Վերջին երկուսն Արշալույս Թաղևույսյանին հոբելյանական մեդալներ հանձնեցին, Կապանի համայնքապետը՝ «Կապան» հուշամեդալ, իսկ ընդհանրապես երեկոյի ընթացքում ծաղիկներ և հուշանվերների պակաս չկար: Օրվա խորհրդին տոնական երանգներ հաղորդեցին տեղացի և դրսեյ երգիչ-երգ-

չուկների, Քաջարանի արվեստի մանկական դպրոցի սաների ելույթները:

Հոբելյարի 100-ամյա տարեդարձը տոն դարձավ Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանի բարի կամեցողության և նախաձեռնության շնորհիվ: Ի դեպ՝ որոշվել է Արշալույս տատի 101-րդ տարեդարձն ավելի ճոխ ու ներկայացուցչական կազմով նշել:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Լույս է տեսել Դավիթ Մաթևոսյանի գիրքը

«Անտարես» հրատարակչությամբ լույս է տեսել պետական, քաղաքական գործիչ, ազատամարտիկ, մտավորական, 44-օրյա պատերազմում զոհված Դավիթ Մաթևոսյանի հողվածների, պատմվածքների, հարցազրույցների և հուշերի ժողովածուն: Գրքի մասին պատկերացում տալու նպատակով ստորև հրատարակում ենք գրքի խմբագիր Աշոտ Սարգսյանի առաջաբանը:

* * *

Իր բոլոր շնորհներով ու գործերով հանդերձ, Դավիթ Մաթևոսյանն ինձ համար, նախ և առաջ, Մարդու և Քաղաքացու կատարյալ տիպարն է: Երա մեջ ամեն ինչ կար, բացի ԵՍ-ը: Վստահ եմ, որ դա կհավաստի նրա հետ շփված ցանկացած անձ:

Լևոն Տեր-Պետրոսյան

Ինչպիսի փորձանքի տակ էլ որ գլուխ դնելու լինեմ, ինչ պիտակներ էլ որ կպցնեն, միևնույն է՝ իմ հնարավորությունները, ունակություններն ու ազդեցությունները գործադրելու եմ հանրության լայն շրջանակներում խաղաղության հաստատման անհրաժեշտությունն իբրև համոզմունք ամրապնդելու և «Խաղաղություն, Հաշտություն, Բարիոցիություն» նշանաբանով ընտրությունների գնացող քաղաքական ուժին լիարժեք աջակցելու համար:

Դավիթ Մաթևոսյան

Նարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժման սկզբից և եթե նրա առաջամարտիկներից ու կազմակերպիչներից էր Դավիթ Մաթևոսյանը: Արդեն 1989-ից նա նաև ազատամարտիկ էր այս բառի բուն նշանակությամբ՝ Մեղրիի տարածաշրջանում կազմակերպել է սահմանների պաշտպանությունը, նաև որպես զինվոր՝ զենքը ձեռքին կանգնել է դիրքում, գնացել ճակատամարտի, նստել ու քնել խրամատում: Այդպես էր 1990-ականների Նարաբաղյան շարժման ու պատերազմի տարիներին, երբ 30-ամյա երիտասարդ էր, այդպես էր 2020-ի պատերազմում, երբ տարիքի այդ 30-ը արդեն կրկնապատկվել էր:

Եզակիներից էր Դավիթը ազատամարտիկների մեջ, գուցե միակը, ում համար հակառակորդը երբեք թշնամի չդարձավ, այլ մնաց մարդ-ժողովուրդ, հարևան, որի հետ համակեցության, հարաբերության լավագույն և միակ ձևը խաղաղ գոյակցությունն էր, բարիոցիությունը՝ հենված հումանիզմի, երկու կողմի իրական արժեքների փոխադարձ գնահատման, ընդունման ու հարգանքի վրա: Սա է այն առանցքային գիծը, որ անխաթար անցնում է նրա հողվածների, հարցազրույցների, ելույթների ու նաև գեղարվեստական գործերի միջով: Այս գաղափարն այնքան խորն է նրա մեջ, որ դուրս է ցցվում անգամ ամենամասնավոր տեղում, ամենամասնապատելի կոնտեքստում՝ պարզ, գեղեցիկ ու տպավորիչ: Հակառակորդի հետ հերթական ընդհարումից հետո հերթական բանակցության գնալու առիթով ասում է՝ «գնացի հակառակորդի հետ բանակցելու» պատերազմի մեջ խաղաղությունն փնտրելու» (տես ilur.am, 17.07.2017թ.): Սա էր Դավիթի առաջնային բնութագիրը, ապրած կյանքի առանցքային գիծը՝ պատերազմի մեջ էլ նա խաղաղություն է փնտրել:

Մտավորական էր նա, դարձյալ այս բառի ամենաընդգրկուն նշանակությամբ: Մտավորական էր իր ամբողջ երջանակը, ինչին անունով հասարակական մի ամբողջ խավ է հավակնում, սակայն, անգամ ամենաբարձր տիտղոսներով, շատ քչերն են այդ կոչման որակները լրացնում այնքան լիարժեք, որքան Դավիթը: Չէր կարող լռել, չտեսնելու տալ որևէ բան, ինչը սխալ էր կամ սխալ էր համարում: Չէր կարող կեղծել ինքն իրեն ոչ մի հարցում և ոչ մի դեպքում: Նրա համար առաջնային էր փաստի և փաստարկի արժեքը, բանավեճում չէր բաշխում համաձայնել, երբ փաստական

կամ տրամաբանական նման բավարար հիմքեր էր տալիս գրուցակիցը:


Ընկերական հարաբերությունները նրա համար, կարծես, միակողմանի էին՝ ինչով կարող է ինքը օգնել և օժանդակել դիմացինին՝ իր արածի փոխարեն ոչինչ չակնկալելով: Դրանով, մի տեսակ, ինքնահաստատվում, դրանից ինքը հարստանում, ներքին մեծ բավականություն էր ստանում:

Բնածին էր Դավիթի քաղաքական մտածողությունը՝ հստակ ու անփոփոխելի սկզբունքներով: Պետական մարդ էր Դավիթը, պետականության նրա ըմբռնումը և պա-

տասխանատվության զգացումը առաջնային էին և միակ հիմքը՝ ոչ միայն իր ստանձնած տարբեր պաշտոններում, այլ նույն կերպ՝ որպես պարզ քաղաքացի նրա վարքագծում ու կեցվածքում: Քաղաքական ու պետական մտածողության թելադրանքով էր, օրինակ, նրա բազմակի բողոքն ու զայրույթը՝ Մեղրիով անցնող Հայաստան-Նախիջևան-Ադրբեջան երկաթուղու «հայրենասիրական» ապամոնտաժման դեմ:

«Ես ուխտ եմ արել», – ասում էր Դավիթը: Նրա սրբազան այդ ուխտը մարդկային-քաղաքական-պետական էր՝ Հայաստանում հաստատված ավագակապետության վերացումը և իր այնքան փափագած խաղաղության հաստատումը: «Ուխտավորի» նվիրումով նա առաջին շարքերում մասնակիցն էր այդ ավագակապետության դեմ բոլոր պայքարներին, մասնավորապես՝ 2006–2007-ին ծառայած դիմակայության առաջին անհավասար պայքարին («Արմատ»–«Այլընտրանք»–«Իմ պիչմենտ» դաշինք), իսկ 2007-ի աշնանից՝

ցիկ ու պարզ լեզուն, շարադրանքի դիմափոխումը ընթերցողին տեղափոխում է այդ օրերը և, կարծես, մասնակից դարձնում իրադարձություններին: Ճշգրիտ վավերագրություն լինելով հանդերձ՝ որոշ դրվագներ պարզապես առանձին կոմիկներ են, հուզիչ իրադարձություններով ու հմայիչ կերպարներով՝ ոչ միայն հայ, այլ նաև ադրբեջանցի: Այս հուշագրության դրվագներից յուրաքանչյուրը, որպես հավաստի աղբյուր, մանրամասն ցուցադրում է Շարժման և պետականության առաջին տարիների բազմազան ու յուրատեսակ ամենօրյա խնդիրներն ու տարաբնույթ խոչընդոտները, որոնց յուժման համար ցանկացած մակարդակի պաշտոնյայից ոչ միայն խելք, կառավարման հմտություններ ճիշտ կողմ-նորոշվելու, հաճախ, ինչպես շախմատում, միակ ճիշտ քայլը գտնելու ունակություն, այլ նաև վճռականություն և անձնական խիզախություն էր պահանջում: Դավիթն այդպիսի գործի մի էտալոն է եղել իրեն վստահված բոլոր գործերում, բնագավառներում և պաշ-



Եզակիներից էր Դավիթը ազատամարտիկների մեջ, գուցե միակը, ում համար հակառակորդը երբեք թշնամի չդարձավ, այլ մնաց մարդ-ժողովուրդ, հարևան, որի հետ համակեցության, հարաբերության լավագույն և միակ ձևը խաղաղ գոյակցությունն էր, բարիոցիությունը՝ հենված հումանիզմի, երկու կողմի իրական արժեքների փոխադարձ գնահատման, ընդունման ու հարգանքի վրա: Սա է այն առանցքային գիծը, որ անխաթար անցնում է նրա հողվածների, հարցազրույցների, ելույթների ու նաև գեղարվեստական գործերի միջով:



նա հանգուցային դերակատարներից էր Հանրապետության հիմնադիր նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի քաղաքական հայտի շուրջ ծավալված համաժողովրդական շարժման, նրա նախընտրական շտաբի հիմնական հետևախոսը:

Գեղագետ էր Դավիթը՝ պատկերի նուրբ զգացողությամբ: Պատմվածքներ էր գրում: Երբ մի առիթով ասացի, թե իր պատկերները Բակունցին են հիշեցնում, նեղվեց, կարմրեց իրեն հատուկ ամոթխածությամբ, ասաց՝ «Էլ չեմ գրի»: Անգամ «մաքուր» քաղաքական հողվածներում ու խոսքում մի արտահայտության, դարձվածի, պատկերի տեսքով «սողոսկում է» գեղարվեստական պատկերը: Գրքի առաջին մասում ամփոփված քաղաքական հողվածներից մի քանիսը հանգիստ կարելի էր դնել նաև նրա գեղարվեստական գործերի շարքում: Ավագակապետական ռեժիմի նրա կերտած կերպարը «Ռեժիմի հուշարձանը» հողվածում, որքան սպանիչ է, նույնքան ճշգրիտ, արձանի նման առարկայական ու շոշափելի: Բայց հենց այնպես հանուն գեղարվեստի չէր գրում: Գեղարվեստը նրա համար միջոց էր՝ քաղաքական խոսքն ու գաղափարը ավելի համոզիչ դարձնելու, շատերին հասցնելու ու համոզելու համար: «Սուլթան Նանան» որքան բարձրաճաշակ, քնքուշ գեղարվեստ է, նույնքան և ավելի՝ քաղաքական, պետական մտածողության արդյունք է և ասելիք: Այստեղ էլ առաջնային խնդիրը պատմությամբ տրված հարևանի հետ խաղաղ գոյակցության, բարիոցիության անշրջանցելի խնդիրն է, որ մշտապես առաջնային է եղել Դավիթ Մաթևոսյանի համար:

Անհնար է սկսել «Սկիզբ» վերնագրած ծավալուն, իր ժանրի մեջ կատարյալ հուշագրությունը և մի շնչով չհասնել վերջին. գեղա-

տոններում: Հիանալի քաղաքական դիտողականությամբ օժտված լինելով, նա արձանագրում է առաջին հայացքից մանր թվացող այնպիսի փաստեր, որոնք գծագրում են են 1990-ականների, են հետագա տարիների ներքաղաքական, հասարակական մթնոլորտը՝ շատ կարևոր հիմք այդ տարիների քաղաքական իրադարձություններն իմաստավորելու ու հասկանալու համար: Նրա հաղորդած մանրակրկիտ տեղեկությունները միայն առանձին մի տարածքի (Մեղրիի շրջանին) չեն վերաբերում, այլ նաև շատ ավելի լայն՝ ընդհուպ հանրապետության արտաքին քաղաքական հարցերին և իրողություններին: Երանի ունենալիք այսօրինակ անաչառ ու վավերական հուշեր ժամանակի այլ գործիչներից ու դերակատարներից:

Անհնար էր, չէր կարող տանը նստել Դավիթը, երբ պատերազմ էր: Եվ չնստեց: Չնայ ինքնուրույն, ինքնակամ, իր պատկերացրած վտանգին դիմակալելու: Չնայ որպես խաղաղության մարտիկ և անմահացավ հանուն խաղաղության...

Հերոսական է եղել Դավիթի կյանքը այս բառի ամենաբազմակողմ նշանակությամբ:

Տարբեր առիթներով կարող են փոքր ու հրապարակ դուրս գալ հարյուր-հազարավոր մարդիկ: Ընթացքը և արդյունքը կախված են նրանից, թե ինչ «մերան-խմորիչ» է ստանում այդ հոծ զանգվածը մարդկային գործոնի տեսքով՝ նկատի ունենալով ոչ միայն համաժողովրդական ընդվճար հեղափոխություն, այլ նաև նույնպիսի որակներով անհատներին մյուս օղակներում: Ամեն ինչ կախված է լինում այս վերջինների գործունեության ու վարքագծի մեկնակետից՝ դա սեփական անձն է, թե երկիրը, ժողովուրդը, պետությունը, հռչակված խնդիրը: 1988-ի Համաժո-

